



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ  
ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201  
հեռ. (0232) 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



*31 ՄԱՅԻՄԻ 2017թ.*

*ԹԻՎ 1004*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ  
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԻԹՈՎ**

*Միրելի երեխաներ, հարգելի ծնողներ*

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ Հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով:

Երեխաներն են հասարակության վաղվա օրը կրողները և մեր խնդիրն է ապահովել նրանց առողջ, անհոգ, ուրախ և երջանիկ մանկությունը: Մենք պետք է ստեղծենք անհրաժեշտ պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա բացահայտել իր ունակություններն ու անհատականությունը:

Թող ծնողական սիրով ու հոգատարությամբ, ընկերական նվիրվածությամբ, մանկան հետաքրքրությամբ ու ձգտումներով իմաստավորվի մեր կյանքի ծաղիկների՝ երեխաների առօրյան և պարտավորեցնի, որ նույնպիսի սիրով ու պատասխանատվությամբ նրանք նայեն մարդկանց ու աշխարհին:

Կրկին շնորհավորելով այս գեղեցիկ տոնի առիթով, ցանկանում եմ բոլոր երեխաներին լիարժեք ու երջանիկ մանկություն, ծնողների անսահման սեր, երազանքների իրականացում, խաղաղություն ու անամպ երկինք:

Հարգանքով՝



**ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**